ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» մայիսի 2013թ. N-------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՎԱՀԵ-ԱԶԱՏ ԱԴԱՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Վահե-Ազատ Ադամյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թամանյան-1 հասցեում տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՀԵ-ԱԶԱՏ ԱԴԱՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վահե-Ազատ Ադամյանը ծնվել է 1913 թվականի մայիսի 26-ին, Պոլսում:

Մեծ եղեռնի ժամանակ կորցնելով բազմաթիվ հարազատներ 1925 թվականին Ադամյանների ընտանիքը վերաբնակվել է Ֆրանսիայի Լիոն քաղաքում:

Վահե-Ազատ Ադամյանը 1936-1945թթ. իր ակտիվ մասնակցությունն է ունեցել Ֆրանսիայում և Իսպանիայում ֆաշիզմի դեմ տարվող պայքարում:

Ֆրանսիական կառավարությունը գնահատելով Ադամյանի բեղմնավոր քաղաքական-հասարակական գործունեությունը, նրան պարգևատրել է մի շարք կառավարական մեդալներով:

Հայաստանի պատմության թանգարանում՝ «Ֆրանսիայում ֆրանսիահայ կումինիստները դիմադրության տարիներին» հատկացված տարածքում ներկայացված են Վահե-Ազատ Ադամյանի ղեկավարած պարտիզանական խմբի մասին նյութեր:

1974 թվականին 3300 հայերի հետ նա ներգաղթել է Սովետական Հայաստան:

Ներգաղթից հետո Վահե-Ազատ Ադամյանը աշխատել է Երքաղսովետի գործադիր կոմիտեում, զբաղեցնելով տարբեր պաշտոններ:

Վահե-Ազատ Ադամյանը զգալի ավանդ է ունեցել բազմաթիվ սփյուռքահայերի սոցիալական վիճակի բարելավման գործում:

Վահե-Ազատ Ադամյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թամանյան-1 հասցեում տեղադրելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել ՀՀ Սփյուռքի նախարար Հ. Հակոբյանի և Վ.Ա. Ադամյանի որդու՝ Մարկ Ադամյանի կողմից:

Հարցը քննարկվել է Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովում:

Հաշվի առնելով վերոգրյալը Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Վահե-Ազատ Ադամյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՀԵ-ԱԶԱՏ ԱԴԱՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վահե-Ազատ Ադամյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՀԵ-ԱԶԱՏ ԱԴԱՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վահե-Ազատ Ադամյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ